

Արձանագրություն 3

«ՇՀԱՊՁԲ-15/15-ՁԻԱՀ-16/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով քիմիական նյութերի գնման ընթացակարգի գնահատման արդյունքների նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ

Անցկացման օրը՝ 14 հոկտեմբերի 2016թ.

Անցկացման ժամը՝ 14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Սոֆիա Գրիգորյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արշակ Ասմարյան
Արշակ Պետրոսյան
Թամարա Հովսեփյան
Մերի Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գևորգ Խանոյան

I. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

(նախագահ՝ Սոֆիա Գրիգորյան)

Ընդունելի գիտություն, որ

1.1 ՀՀ ֆինանսների նախարարություն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ուղարկելուց հետո սահմանված ժամկետում (13.10.2016թ.) ստացել ենք եզրակացության, համաձայն որի մասնակիցները («Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ն, «ՌՈՄԱ» ՍՊԸ-ն, «Պրոմ-Տեստ» ՍՊԸ-ն, «ՔԻՄԼԱԲ» ՍՊԸ-ն և «ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ն) չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ և մասնակիցների կողմից ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Հանձնաժողովը որոշեց.

- անբավարար գնահատել «Պրոմ-Տեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված N 37 և N 38 չափաբաժինների մասով հայտը՝ հետևյալ հիմնավորմամբ (վերոնշյալ չափաբաժինների անվանումները և տեխնիկական բնութագրերը չեն ներկայացվել):

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.2 Հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.01.2015թ. N 105-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետի պահանջները, հանձնարարել հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով՝

✓ Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Պրոմ-Տեստ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 17.10.2016թ.) շտկել առկա թերությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

II. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

(նախագահ՝ Նոնա Սարգսյան)

2.1. Հանձնաժողովը որոշեց.


«Պրոմ-Տեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկման ենթակա փաստաթղթերի գնահատման նիստն անցկացնել 17 հոկտեմբերի 2016թ. ժամը 10:00-ին՝ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, հասցեն՝ Աճառյան 2, N 207 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝

Ս.Գրիգորյան



(ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝


Ա.Ասմարյան


(ստորագրություն)


Ա. Պետրոսյան


(ստորագրություն)

Թ.Հովսեփյան



(ստորագրություն)

Մ.Գրիգորյան


(ստորագրություն)

Հանձնաժողովի քարտուղար՝

Գ.Խանոյան


(ստորագրություն)